«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	ԼԵԶՎԱԿԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ
ԱՌԱՐԿԱ	ԴԱՍՎԱՐ
ՀԵՂԻՆԱԿ	ՄԱՐԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՄԱՐԶ	ԿՈՏԱՅՔ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Ք. ՀՐԱԶԴԱՆԻ ԹԻՎ 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ---------- էջ 3

ԳԼՈՒԽ 1. ԼԵԶՎԱԿԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

---------- էջ 6

ԳԼՈՒԽ 2. ԼԵԶՎԱԿԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՏԵՂՆ ՈՒ ԴԵՐԸ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ---------- էջ 8

ԳԼՈՒԽ 3. ԼԵԶՎԱԿԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐՆ ՈՒ ՁԵՎԵՐԸ ---

---------- էջ 9

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ---------- էջ 20

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ---------- էջ 21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Երեխայի խոսքի զարգացումը եղել և մնում է մայրենի լեզվի գերագույն նպատակներից մեկը: Այն մայրենի լեզվի ուսուցման տարրական օղակի հիմնական նպատակներից մեկն է: Իսկ խոսքի զարգացման բաղադրիչներն են բառապաշարի հարստացումը և կապակցված խոսք կառուցելու կարողությունները: Առանց լեզվական տարրական գիտելիքների չի կարող լինել գեղեցիկ, պատկերավոր ու դիպուկ խոսք: Ահա թե ինչու ընտրված թեման միշտ էլ արդիական է:

Լեզվական տարրական գիտելիքների ուսուցումը կրտսեր դպրոցում խիստ կարևոր է, առանց որի աշակերտները չեն կարող ճշգրիտ և գեղեցիկ խոսք կառուցել:

Հետազոտության նպատակը տարրական դպրոցում լեզվական տարրական գիտելիքների ուսուցման հիման վրա խոսքի զարգացման գործընթացի արդյունավետ մեթոդների և դրանց կիրառման հնարների բացահայտումն է:

Մայրենի լեզվի ուսուցումը տարրական դասարաններում հետապնդում է երեք հիմնական նպատակ՝

- *խոսելու կարողության զարգացում,*
- *մայրենի լեզվի լեզվագանձի տիրապետում,*
- *քերականական հիմնական օրենքների կամ, այլ կերպ ասած՝ այդ լեզվի տրամաբանական համակարգի յուրացում:*

Հետազոտության օբյեկտը տարրական դասարաններում սովորողների լեզվական տարրական գիտելիքների ուսուցման գործընթացի արդյունավետությունն ապահովող մեթոդական համակարգն է:

Հետազոտության առարկան տարրական դասարաններում լեզվական տարրական գիտելիքների ուսուցման գործընթացն է՝ աշակերտների խոսքի զարգացմանը նպաստող հնարավորություններով:

Հետազոտության խնդիրներն են՝

- սովորողի ինքնարտահայտման պահանջմունքի պահպանում ու զարգացում,
- լեզվամտածողության, լեզվազգացողության զարգացում,

- բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ խոսքի, հստակ արտահայտման կարողությունների զարգացում,
- բառարաններից, հանրագիտարաններից, տեղեկատվական այլ աղբյուրներից օգտվելու հմտության զարգացում,
- ստեղծագործական մտածողության, երևակայության զարգացում,
- վերլուծելու, համադրելու, հակադրելու հմտությունների զարգացում,
- լեզվական տարրական գիտելիքների յուրացում:

Մայրենի լեզվի ուսուցումը պետք է սովորողին հնարավորություն տա՝

- անկաշկանդ և գրագետ, գրավոր և բանավոր արտահայտել սեփական մտքերը, զգացմունքները, կառուցել ճիշտ և փաստարկված խոսք,
- զարգացնել լեզվական-ստեղծագործական երևակայությունը:

Մայրենի լեզվի ուսուցման կազմակերպման խնդիրն է՝ ստեղծել ազատ, անկաշկանդ միջավայր՝ խոսքի յուրացումը սերտորեն կապելով սովորողի առօրյայի, ամենօրյա գործունեության հետ:

Հետազոտության մեջ կիրառել ենք հետևյալ **մեթոդները**. դիտման և զրույցի, որոնք կնպաստեն կրտսեր դպրոցականների լեզվական տարրական գիտելիքների ուսուցմանն ու խոսքի զարգացմանը:

Մայրենի լեզվի տարրական դասընթացը բաժանվում է երկու մասի՝ *լեզվական նախագիտելիքներ* և *լեզվական տարրական գիտելիքներ*, որոնք միմյանցից տարբերվում են թե՛ իրենց ծավալով ու բովանդակությամբ, և թե՛ ուսուցման մեթոդներով:

Լեզվական նախագիտելիքներ հասկացության տակ ընդունված է հասկանալ խոսքի կամ ամբողջական պատմության, նախադասության, բառի, վանկի, հնչյունի ու տառի, առարկա, գործողություն և հատկանիշ ցույց տվող բառերի վերաբերյալ միանգամայն գործնական կերպով տրվող տեղեկությունները:

Լեզվական տարրական գիտելիքներ հասկացության տակ ըմբռնվում են բառի կազմության կամ բառակազմական տեղեկությունները, նախադասության, ուրիշի ուղղակի խոսքի և կոչականի շարահյուսական տեղեկությունները, ինչպես նաև խոսքի մասերի վերաբերյալ ձևաբանական

տեղեկությունները և դրանց հետ կապված կետադրական նշանների գործածությունը՝ քերականական պարզ ձևակերպումներով ու անհրաժեշտ լեզվական–գիտական տերմիններով։

Քերականությունը համարվում է լեզվի տրամաբանությունը։ Այն զարգացնում է նաև աշակերտների տրամաբանական մտածողությունը, մշակում է կոնկրետ փաստերից եզրակացություններ բխեցնելու կարողությունը։

ԳԼՈՒԽ 1. ԼԵԶՎԱԿԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Քերականական հասկացությունների ուսուցումը տարրական դպրոցում ուսուցչից պահանջում է լուրջ նախապատրաստություն, որովհետև դրանք վերացական են, իսկ կրտսեր դպրոցականների վերացական մտածողությունն անբավարար է զարգացած։ Քերականական գիտելիքների ձեռքբերման գործընթացում երեխաները սովորում են՝

1) առանձնացնել բառի մեջ եղած հնչույթները,
2) ընկալել բառի ձևաբանական կառույցը, նրա յուրաքանչյուր մասի նշանակությունը (արմատ, ածանց, վերջավորություն),
3) գիտակցել բառը՝ որպես ինքնուրույն խոսքային միավոր,
4) ձեռք բերել անհրաժեշտ բառամթերք։

Լեզվի տարրական դասընթացը տարբեր ժամանակներում տարբեր բովանդակություն է ունեցել։

Մայրենի լեզվի տարրական դասընթացը բաժանվում է 2 մասի՝

I. լեզվական նախագիտելիքներ,
II. լեզվական տարրական գիտելիքներ, որոնք միմյանցից տարբերվում են լեզվական հասկացությունների ծավալով, խորությամբ, նպատակներով ու խնդիրներով, ուսուցման ձևերով ու մեթոդներով։

Լեզվական նախագիտելիքները երեխաներին հաղորդվում են առանց քերականական որոշակի կանոնների սահմանումների՝ էության կամ բովանդակության պարզ նկարագրությամբ։ Տարրական դասընթացում լեզվական հասկացությունները տրված են դիդակտիկական համակարգով՝ պարզից դեպի բարդը տանող սկզբունքով և մոտավորապես ճիշտ սահմանումներով։ Ա. Բահաթրյանի կարծիքով, տարրական դասարանների հայոց լեզվի դասատուն պետք է պարծենա ոչ թե նրանով, որ իր աշակերտները լավ գիտեն մայրենի լեզվի քերականական կանոնները, այլ, թե որքանով են նրանք ճիշտ գործադրում դա իրենց բանավոր և գրավոր խոսքի մեջ։[1]

[1] Ա. Բահաթրյան, Քերականություն աշխարհիկ լեզվի, («Փոխանակ յառաջաբանի»), «Մանկավարժական թերթ», 1878, №4, էջ 56

Լեզվական երևույթների ճանաչման ու տարբերակման համար կարևոր նշանակություն ունի հարցադրումը։ Խոսքի մասերն ունեն իրենց որոշակի ու կայուն հարցերը, նախադասության տարբեր անդամները՝ իրենց հարցերը, որոնք զգալիորեն տարբերվում են միմյանցից և չի կարելի միմյանց հետ շփոթել։ Սակայն ինչպես մեթոդիստներից շատերն են նշում, հարցը, որպես բոլոր տեսակի վերլուծությունների ժամանակ ընդհանուր մեթոդ, ունի նաև լուրջ թերություններ։ Այն պետք է գործադրել զգուշությամբ, որպես օժանդակ միջոց միայն։

Քերականական հասկացությունների ձևավորման գործում կարևոր նշանակություն ունեն նաև քերականական սահմանումները, որոնք առաջադրվում են երեխաներին որպես քերականական այս կամ այն երևույթի վերաբերյալ սովորած կամ ձեռք բերած գիտելիքներից ու տեղեկություններից արված լեզվական ու տրամաբանական խիստ հակիրճ, բայց դիպուկ ու միանգամայն բնորոշ եզրակացություն։ Նախ՝ դրանք հիմնավոր կերպով պետք է բացատրել ու հասկացնել երեխաներին, որպեսզի կանոնն իսկապես դառնա մինչ այդ սովորածից բխեցված տրամաբանական եզրակացություն, ապա պետք է այն պարզ ու հստակ ձևակերպմամբ սերտել տալ, իսկ հետո երեխաներին ինքնուրույն գտնել տալ այդ կանոնը հաստատող համապատասխան օրինակներ ու լեզվական փաստեր։

ԳԼՈՒԽ 2. ԼԵԶՎԱԿԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՏԵՂՆ ՈՒ ԴԵՐԸ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Տարրական դասարաններում հայոց լեզվի ուսումնասիրման նպատակը կրտսեր դպրոցականների բառապաշարի մաքրումն ու հարստացումն է, խոսքի հղկումն է ու զարգացումը, կապակցված խոսք (բանավոր և գրավոր) կառուցելու կարողության մշակումը:

Տարրական դասարաններում մայրենի լեզվի ուսուցման ընդհանուր համակարգում լեզվական կարողությունների մշակումն ու լեզվական պաշարի հարստացումը, քերականության ուսուցումը խիստ կարևոր ու անհրաժեշտ են, և երբեք չի կարելի դրանք հակադրել միմյանց կամ դրանցից որևէ մեկին բացարձակ նախապատվություն տալ:[2]

Մայրենի լեզվի քերականության յուրացումը նպաստում է աշակերտների ճանաչողական կարողությունների, տրամաբանական մտածողության և լեզվամտածողության զարգացմանը: Աշակերտները վերլուծության ու համադրման հիման վրա գտնում են լեզվական երևույթների միջև գոյություն ունեցող տարբերություններն ու ընդհանրությունները, կատարում են դատողություններ: Այս ամենը զարգացնում է երեխաների վերացական մտածողությունը:

Այսպիսով՝ առանց տարրական քերականության անհնար է պատկերացնել լեզվի ուսուցումը:

[2] Ջ. Գյուլամիրյան, «Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա», Երևան 2006, էջ 186

ԳԼՈՒԽ 3. ԼԵԶՎԱԿԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐՆ ՈՒ ՁԵՎԵՐԸ

Մեթոդական գրականության մեջ որոշակի տարբերություն է դրվում գիտելիքների ուսուցման ուղիների ու մեթոդների միջև: «Դրանք տարբեր հասկացություններ են: Ուսուցման ուղիները ցույց են տալիս նրա տարբեր ընթացքը՝ սկզբից մինչև վերջ: Մինչդեռ ուսուցման մեթոդները աշակերտների հետ ուսուցչի ղեկավարությամբ կատարվող աշխատանքի այն ձևերն են, որոնցով ապահովվում է գիտելիքների, կարողությունների ու հմտությունների ձեռքբերումը նրանց կողմից: Մեթոդական հնարները մտնում են մեթոդների մեջ և կազմում նրանց բաղկացուցիչ մասը»:[3]

Լեզվական տարրական գիտելիքների ուսուցումը կրտսեր դպրոցում իրականացվում է վերլուծական-համադրական մեթոդով: Ճանաչողության՝ ակտիվ-ստեղծագործական-որոնողական գործունեություն ծավալելիս աշակերտն անցնում է ինդուկցիա (մտահանգում, եզրակացություն) – դեդուկցիա (մասնավորեցում) ուղիով, որի առաջին՝ ինդուկցիոն հատվածը վերլուծության փուլն է, իսկ դեդուկցիոն հատվածը՝ համադրման փուլը:

<u>Լեզվական նախագիտելիքների ուսուցումը:</u> Յուրաքանչյուր շաբաթվա ընթացքում մեկ քերականական կամ ուղղագրական հասկացությունից ավելին չպետք է մատուցվի: Յուրաքանչյուր, թեկուզ պարզագույն, հասկացություն ամբողջ ուսումնական տարվա ընթացքում պետք է հետևողականորեն կրկնել ու ամրակայել անցածը:

<u>Գաղափար հնչյունի և նրա տառի մասին:</u> Գրաճանաչության շրջանում աշակերտներն ըմբռնում են տառը՝ որպես հնչյունի պատկեր: Այս շրջանում լեզվական նախագիտելիքներն ուսուցանվում են պատմություն – նախադասություն – բառ – վանկ – հնչյուն – տառ հաջորդականությամբ: Գրաճանաչության ավարտից հետո ուսուցումն իրականացվում է հակադարձ՝ տառ – հնչյուն – վանկ – բառ – նախադասություն – պատմություն հաջորդականությամբ: Երեխաները պիտի գործնականորեն տարբերեն հայերենի 6 ձայնավոր հնչյունները և դրանց 8 տառերը (ա, ու, է(ե), ի, ը, օ(ո)): Պետք է տարբերակել տալ մեր բաղաձայնների երկաստիճան (զ-ս, ժ-շ, ղ-խ, վ-ֆ) և եռաստիճան (բ-պ-փ, գ-կ-ք, դ-տ-թ, ձ-ծ-ց, ջ-ճ-չ)

[3] Թ. Գ. Ջուհարյան, Բայի ուսուցման հիմնական հարցերը, Երևան, 1956, էջ 106:

համակարգը։ Երեխաներին գաղափար պետք է տալ հնչմամբ ու գրությամբ չտարբերվող ու տարբերվող բաղաձայնների մասին։ Երեխաները պետք է պարզ կանոններով բնորոշեն ձայնավոր և բաղաձայն հնչյունները (առաջինները՝ որպես միայն ձայնից կազմված կամ առանց արգելքի արտասանվող հնչյուններ, իսկ երկրորդները՝ որպես ձայնից և աղմուկից կազմված կամ արգելքով արտասանվող հնչյուններ)։

Գաղափար վանկի մասին։ Երեխաները սովորում են բառերը բաժանել վանկերի և նկատում են, որ բառն ունի այնքան վանկ, որքան ձայնավոր։ Արտասանվող բառը ծափերի միջոցով նրանք բաժանում են մասերի և յուրաքանչյուր մասն արտասանում միանգամից, օդի մեկ արտաշնչումով։ Հենց այդ վանկն է։ Այս փուլում խորացվում են և ամրակայվում տողադարձի մասին երեխաների ունեցած գիտելիքները։ Այնուհետև ամբողջացնում են՝ բառի մեջ եղած այն հնչյունը կամ հնչյունների միացությունը, որն արտասանվում է միանգամից, կոչվում է վանկ։[4]

Գաղափար բառի մասին։ Բառը հնչյունների (տառերի) այն միացությունն է, որն իմաստ է արտահայտում։[5] Հարցերի միջոցով (ո՞վ է, ի՞նչ է, ի՞նչ է անում, ինչպիսի՞ն է) պետք է որոշեն առարկա, գործողություն և հատկանիշ ցույց տվող բառերը։ Երեխաների գիտակցությանը պետք է հասցնել բառի և նրա ցույց տված առարկայի տարբերությունները։ Առարկաները (իրերը) կարելի է վերցնել, ձեռք տալ, շոշափել և այլն, իսկ դրանց անունները՝ բառերը, միայն արտասանել, գրել և կարդալ։ Լեզվական նախագիտելիքների ուսուցման փուլում պիտի գաղափար տրվի *–եր* և *-ներ* հոգնակիակերտ մասնիկների մասին։

Արմատ, նույնարմատ բառեր։ Ածանց։ Երեխաներն ուսուցչի օգնությամբ հայտնաբերում են, որ բառի կրկնվող մասի՝ արմատի մեջ թաքնված է բառի հիմնական իմաստը, այսինքն՝ այն բառի իմաստակիր մասն է։ Այստեղից եզրակացություն.

- Բառի այն մասը, որն անփոփոխ կերպով կրկնվում է մի շարք բառերի մեջ և արտահայտում է բառի հիմնական իմաստը, կոչվում է *արմատ*։
- Միևնույն արմատից կազմված բառերը կոչվում են *նույնարմատ* բառեր։

---

[4] Ջ. Գյուլամիրյան, «Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա», Երևան 2006, էջ 197

[5] Նույն տեղում

Այն մասնիկը, որն ավելանալով բառի սկզբից կամ վերջից, փոխում է նրա ձևը, նրան նոր իմաստ է տալիս, կոչվում է *ածանց*: Ածանց ունեցող բառերը կոչվում են *ածանցավոր*: Կան ածանցներ, որոնք ավելանում են բառի սկզբում՝ *նախածանցներ*, և ածանցներ, որոնք ավելանում են բառի վերջում՝ *վերջածանցներ*:

<u>Պարզ և բարդ բառերի ուսումնասիրումը:</u> Միայն մեկ արմատից կազմված բառերը կոչվում են *պարզ բառեր*: Համադրման ճանապարհով գաղափար է ձևավորվում բարդ բառերի մասին: Գրատախտակին գրվում է երկու բառաշարք, որոնց բառերի միացումից կարող են ստացվել նորերը՝ երես + սրբիչ = երեսսրբիչ: Լինում են այնպիսիք, որոնք իրար միացած են լինում ***ա*** հոդակապով: Ուսուցիչն ասում է, որ ***ա*** տառը կապում է բառերի արմատները, դրա համար էլ այն կոչվում է հոդակապ: Աշակերտները եզրակացնում են.

1. Մեկից ավելի արմատներից կազմված բառերը կոչվում են *բարդ բառեր*, որոնք ևս կարող են լինել ածանցավոր (բարդ ածանցավոր):
2. Բարդ բառի երկու մասերն իրար միացնող *ա* ձայնավորը կոչվում է *հոդակապ*:

<u>Գաղափար նախադասության մասին:</u> Նախաայբբենական շրջանում երեխաները կարողանում են կազմել պարզ նախադասություններ, գծել դրանց գծապատկերները: Նախադասության ուսուցման նախնական փուլում սահմանում կամ կանոն չի ուսուցվում: Աշխատանքն իրականացվում է վարժությունների ճանապարհով: Երեխաները պետք է ձեռք բերեն խոսքում պատմողական, հարցական, հրամայական և բացականչական նախադասություններ օգտագործելու ունակություն: Այսպիսով երեխաները եզրակացնում են՝ բառերով արտահայտված ամեն մի միտք կոչվում է *նախադասություն*[6]:

<u>Լեզվական տարրական գիտելիքների ուսուցումը:</u> Լեզվական տարրական գիտելիքների ներկա համակարգն իր մեջ ընդգրկում է 3 հիմնական թեմա՝ *«Նախադասություն», «Բառակազմություն» և «Խոսքի մասեր»* :

<u>Նախադասության ուսուցումը:</u> Վերցնել առարկաներն ու դրանց պարզ գործողություններն արտահայտող նկար-նախադասությունների մի պլակատ և առաջարկել նկարներն արտահայտել բառերով:

---

[6] Ջ. Գյուլամիրյան, «Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա», Երևան 2006, էջ 204

Տղան գրում է:

Ինքնաթիռը թռչում է:

Ստացված նախադասությունները կարելի է գրել գրատախտակին և կարդալու, վերլուծելու միջոցով գալ եզրակացության, որ դրանցից ամեն մեկը մի միտք է արտահայտում:

Կարելի է գրատախտակը բաժանել 2 մասի, ձախ մասում գրել մեկ նախադասության բառերը՝ խառը դասավորված, իսկ աջ մասում՝ նախադասությունը: Օրինակ՝

Աշնանային, բազմագույն, այգու, զգեստ, հագան, ծառերը	Աշնանային այգու ծառերը բազմագույն զգեստ հագան:

Երեխաները կարդում են ձախ և աջ մասերը, ապա համեմատելու, հակադրելու միջոցով գալիս են եզրակացության. աջ կողմի բառաշարքը միտք է արտահայտում, իսկ ձախ կողմի բառերը միտք չեն արտահայտում:

Տրամաբանական այսպիսի աշխատանքից հետո եզրակացնում են. բառերի այն խումբը, որը միտք է արտահայտում, կոչվում է նախադասություն:[7]

<u>Նախադասության կազմությունը:</u> Երեխաներին նախադասության կազմությանը ծանոթացնելու նպատակով կարելի է վերցնել 2-ից 7 բառից կազմված 4 կամ 5 պատրաստի նախադասություններ: *Հասմիկը գնաց: Հասմիկը գնաց դաշտ: Միրունիկ Հասմիկը գնաց դաշտ: Միրունիկ Հասմիկը առավոտյան գնաց դաշտ* նախադասությունների բառային վերլուծությունն ու բառային կազմի պարզ համեմատության միջոցով աշակերտներին կարելի է ցույց տալ, որ այդ նախադասություններից առաջինը կազմված է 2 բառից, երկրորդը՝ 3, երրորդը՝ 4, չորրորդը՝ 5 բառից և այլն: Ուսուցչի օգնությամբ եզրակացնում են. նախադասության կազմի մեջ մտնող բառերը կոչվում են *նախադասության անդամներ:*

[7] Ա. Տեր-Գրիգորյան,«Քերականության մեթոդիկա», Երևան 1977, էջ 96

Նախադասությունը կարող է ունենալ *գլխավոր* և *երկրորդական* անդամներ։ Առանց գլխավոր անդամների նախադասություն չի կարող կազմվել։ Նախադասության գլխավոր անդամները երկուսն են՝ *ենթական* և *ստորոգյալը*։

Լրացումներ։ Ենթակային և ստորոգյալին լրացնող անդամները կոչվում են *լրացումներ*։ Լրացումները լինում են երկու տեսակ՝ *ենթակայի լրացումներ* և *ստորոգյալի լրացումներ*։

Նախադասության տեսակներն ըստ արտասանության երանգի լինում են 4 տեսակ՝ *պատմողական, հարցական, հրամայական* և *բացականչական։*

Որևէ պատմողական բնագրի վերլուծության միջոցով կարելի է ցույց տալ, որ միմյանց հետ խոսելիս մարդիկ պատմում են իրենց տեսածի, լսածի, կարդացածի կամ զգացածի մասին, որ այդ ընթացքում գործածված նախադասությունները պատմողական բնույթի են։ Պատմելու ձևով ասված նախադասությունը կոչվում է *պատմողական նախադասություն։*[8]

Հարցական նախադասություններով հարուստ բնագրի ընթերցման ու վերլուծության միջոցով երեխաներին կարելի է ցույց տալ, որ՝

1) հարցում արտահայտող նախադասությունը կոչվում է *հարցական նախադասություն,*
2) գրելիս հարցում արտահայտող բառի վերջին վանկի ձայնավորի վրա դրվում է *հարցական նշան,*
3) կարդալիս հարցական նշան ունեցող բառը բարձր և հարցի ձևով է արտասանվում։

Նույն ձևով զաղափար կարելի է տալ *հրամայական* և *բացականչական նախադասությունների* մասին։

Պարզ և բարդ նախադասություններ։ Պարզ և բարդ նախադասությունների մասին պետք է հաղորդել դրանց համեմատության ու հակադրության միջոցով։ Հարցերի միջոցով երեխաները գալիս են եզրակացության, որ այն նախադասությունները, որոնք արտահայտում են մեկ միտք, կոչվում են *պարզ նախադասություններ,* իսկ մեկից ավելի միտք արտահայտողները՝ *բարդ նախադասություններ։*

---

[8] Ա. Տեր-Գրիգորյան,«Քերականության մեթոդիկա», Երևան 1977, էջ 115

Պարզ նախադասության տեսակները: Աշակերտներին գրել տալ միայն գլխավոր անդամներից կազմված նախադասությունները և ապա դրանք ընդարձակել ու գրել հաջորդ սյունակներում՝ դեմ – դիմաց: Համեմատելով եզրակացնում ենք, որ առաջին շարքի պարզ նախադասությունները բաղկացած են միայն գլխավոր անդամներից՝ *պարզ համառոտ նախադասություն,* իսկ երկրորդ շարքի նախադասությունները՝ գլխավոր և երկրորդական անդամներից՝ *պարզ ընդարձակ նախադասություն:*

Բարդ նախադասություն: Երեխաներին սովորեցնում ենք, որ բարդ նախադասության կազմի մեջ մտնող պարզ նախադասություններն անպայման ընդհանուր մտքով պետք է կապված լինեն իրար հետ:

Նախադասությունների համեմատությունն ու հակադրությունը հնարավորություն կտա եզրակացնելու, որ՝

1) բարդ նախադասության կազմի մեջ մտնող պարզ նախադասությունները միմյանցից անջատվում են ստորակետով,
2) բայց, իսկ, թե, որպեսզի, որովհետև, որ բառերից առաջ միշտ ստորակետ է դրվում,
3) եթե առաջին նախադասության ստորոգյալը նույնությամբ կրկնվում է երկրորդ նախադասության մեջ, այն սովորաբար չի ասվում, իսկ գրավոր խոսքում չգրված ստորոգյալի փոխարեն բութ է դրվում և այլն: [9]

Կոչականի ուսուցումը: Կոչականը ճանաչվում է և ընկալվում միայն նախադասության մեջ (խոսքում): Կոչականի մասին գաղափար պետք է տալ կենդանի խոսքից վերցրած օրինակի դիտարկման միջոցով՝ բացատրելով կետադրությունը: Կոչականը նախադասության այն բառն է, որը ցույց է տալիս, թե ում է դիմում խոսողը և նախադասության անդամ չի դառնում:[10] Նախադասության անդամներից այն անջատվում է ստորակետով, իսկ նրա վերջին ձայնավորի վրա շեշտ է դրվում:

Ուրիշի խոսքի ուսուցումը: Ուրիշի խոսքով կազմված նախադասությունը բարդ նախադասություն է: Գրատախտակին գրում ենք ուրիշի ուղղակի խոսքի մի քանի օրինակներ, իսկ դիմացը՝ դրանց անուղղակի դաձրած ձևերը:

---

[9] Ա. Տեր-Գրիգորյան,«Քերականության մեթոդիկա», Երևան 1977, էջ 120

[10] Ջ. Գյուլամիրյան, «Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա», Երևան 2006, էջ 216

1. Հրայրն ասաց. «Մեր պարտեզում գեղեցիկ ծաղիկներ եմ ցանել»։	Հրայրն ասաց, որ իրենց պարտեզում գեղեցիկ ծաղիկներ է ցանել։
2. – Երեկ Արմինեն ու Արան կինո էին գնացել,- ասաց Կամոն։	Կամոն ասաց, որ երեկ Արմինեն ու Արան գնացել էին կինո։

Առաջին և երկրորդ շարքի ընդգծված նախադասություններն ասվել են ուրիշի կողմից, իսկ չընդգծված մասերն հենց պատմողի խոսքերն են։ Աշակերտները եզրակացնում են՝

1) երբ ուրիշի ասածը բերում ենք մեր խոսքի մեջ, այն կոչվում է ուրիշի խոսք,
2) ուրիշի խոսքը լինում է երկու տեսակ՝ *ուղղակի* և *անուղղակի,*
3) ուղղակի խոսքը մեջ է բերվում անփոփոխ ձևով, ինչպես որ ասվել է, իսկ անուղղակի խոսքը՝ փոփոխված ձևով, վերապատմվում է։

Առաջին շարքի առաջին նախադասության վրա կարելի է ցույց տալ, որ ուղղակի խոսքը կարող է հեղինակի խոսքից անջատվել միջակետով, սկսվել մեծատառով և երկու կողմերից առնվել չակերտների մեջ։ Առաջին շարքի հաջորդ նախադասության վրա կարելի է ցույց տալ, որ ուղղակի խոսքը կարող է նաև սկսվել նոր տողից՝ գծով և մեծատառով, իսկ հեղինակի խոսքից անջատվել ստորակետ գծով։ Կա նաև երրորդ ձևը, երբ հեղինակի խոսքից հետո միջակետ է դրվում, և ուղղակի խոսքը սկսվում է նոր տողից՝ գծով և մեծատառով, առանց չակերտի։ Օրինակ՝

Վարդանն ասաց.

- Մենք վաղ առավոտյան գնալու ենք էքսկուրսիա։

Անուղղակի խոսքի ժամանակ մեջբերված խոսքը հեղինակի խոսքից անջատվում է ստորակետով։

Զևաբանական տարրական գիտելիքներ։ Լեզվական տարրական գիտելիքների ուսուցման փուլում նպատակահարմար է խոսքի մասերն ուսումնասիրել հետևյալ հաջորդականությամբ. գոյական, բայ, ածական, թվական, դերանուն, շաղկապ, ձայնարկություն։

Գոյական անուն։ Երեխաները վերհիշում են, որ *ո՞վ* և *ի՞նչ* (*ովքե՞ր* և *ինչե՞ր*) հարցերին պատասխանող բառերը ցույց են տալիս առարկա։ Գրատախտակին գրում են այդպիսի բառեր և եզրակացնում՝

1. առարկա ցույց տվող բառերը կոչվում են *գոյական անուն*,

2. գոյական անունները պատասխանում են *ո՞վ, ովքե՞ր, ի՞նչ, ինչե՞ր* հարցերին։[11]

Աշակերտներին առաջարկել ո՞վ և ի՞նչ հարցերին պատասխանող բառեր և հանձնարարել դրանք խմբավորել ըստ տրված հարցերի։ Ակնառու կդառնա, որ ի՞նչ հարցին պատասխանող բառերը ցույց են տալիս իրեր, իսկ ո՞վ հարցին պատասխանողները՝ անձեր։

Տարաբնույթ վարժությունների միջոցով եզրակացնում են.

- Գոյական անունները լինում են հատուկ և հասարակ։
- Միևնույն տեսակի բոլոր առարկաներին տրվող ընդհանուր անունը հասարակ անուն է և կոչվում է ընդհանրացնող անուն։ Այն գրվում է փոքրատառով։
- Միևնույն տեսակի առարկաներից միայն մեկին տրվող առանձին անունը կոչվում է հատուկ անուն և գրվում է մեծատառով։
- Գոյական անունն ունի երկու թիվ՝ եզակի և հոգնակի։
  - ✓ Գոյական անվան եզակի թիվը ցույց է տալիս նույն տեսակի մի առարկա, իսկ հոգնակի թիվը՝ մեկից ավելի առարկաներ։
  - ✓ Հոգնակի դարձնելու համար միավանկ բառերի վրա ավելացնում ենք –եր, իսկ բազմավանկ բառերի վրա՝ -ներ մասնիկը։

Պետք է ասել, որ հատուկ անունները հոգնակի թիվ չեն ունենում, իսկ եթե դրվում են հոգնակի թվով, նրանք դառնում են հասարակ անուններ և գրվում են փոքրատառով (օրինակ՝ միշտ էլ քաջ <u>նազարների</u> վերջն այդպես է լինում)։

<u>**Բայ**</u>։ Բայ են կոչվում այն բառերը, որոնք ցույց են տալիս, թե ինչ է անում, ինչ է լինում կամ ինչ վիճակի մեջ է առարկան և պատասխանում է *ի՞նչ է անում, ի՞նչ է արել, ի՞նչ է եղել, ի՞նչ է լինում* և այլ հարցերին։[12]

Դեմքի կարգը բացատրելու համար գրատախտակին կարելի է գրել որևէ բայի խոնարհված ձևի լրիվ աղյուսակը և բացատրել բայի դեմքերը։ Բայն ունի երեք *դեմք՝ I, II և III*։ Խոսողն I դեմքով արտահայտում է իր կատարած գործողությունը, II դեմքով՝ իր խոսակցի, III դեմքով՝ III մարդու կամ իրի կատարած գործողությունը։ Բայը փոխվում է ըստ այդ դեմքերի. բայի փոփոխված ձևերը կոչվում են *դիմավոր* (դեմք ունեցող), իսկ չփոփոխվածները՝ *անդեմ* (դեմք չունեցող) ձևեր։

---

[11] Ա. Տեր-Գրիգորյան,«Քերականության մեթոդիկա», Երևան 1977, էջ 138

[12] Ա. Տեր-Գրիգորյան,«Քերականության մեթոդիկա», Երևան 1977, էջ 154

Պետք է բացատրել նաև բայի հիմնական և օժանդակ մասերի փոխհարաբերությունը։ *Գրում եմ* բայի մեջ *գրում*-ը հիմնական մասն է, իսկ *եմ*-ը՝ օժանդակ, որը կոչվում է օժանդակ բայ։

Օժանդակ բայերը լինում են երկու տեսակ՝ ***եմ, ես, է, ենք, եք, են*** *և* ***էի, էիր, էր, էինք, էիք, էին***։

Սովորեցնել օժանդակ բայերի անջատ գրությունը և ուղղագրությունը, ընթերցելիս նախորդ բառի հետ միասին կարդալու կանոնը։

Բայն ունի երկու թիվ՝ *եզակի* և *հոգնակի*։ Երեխաներին պետք է ասել, որ բայն ունի նաև ժամանակի կարգ, որը հատուկ է միայն իրեն։ Բայն ունի երեք ժամանակ՝ *ներկա, անցյալ, ապառնի*։ Բայի ներկա ժամանակը ցույց է տալիս խոսելու պահին կատարվող գործողություն, անցյալ ժամանակը ցույց է տալիս խոսելուց առաջ կատարված գործողություն, ապառնի ժամանակը՝ խոսելուց հետո կատարվելիք գործողություն։ *Խոնարհումը* բայի փոփոխությունն է դեմքով, թվով և ժամանակով։ Այն բնութագրական է միայն բային։

Ածական անուն։ Երեխաներին անհրաժեշտ է ասել, որ ածականը թիվ, դեմք, հոլով և ժամանակ չունի, այն չի հոլովվում և չի խոնարհվում, գոյականի հետ հոլովվելիս ոչ մի փոփոխության չի ենթարկվում։ Այս ամենից հետո սահմանում են. այն բառերը, որոնք պատասխանում են *ինչպիսի՞, որպիսի՞, ո՞ր* հարցերին, ցույց են տալիս առարկայի հատկանիշը և չեն հոլովվում ու չեն խոնարհվում, *ածական անուն* կամ *ածական* են։[13]

Թվական անուն։ Աշակերտներին հանձնարարել տրված բառախմբի բառերն ըստ խոսքի մասերի գրել առանձին սյունակներով՝ գոյական, բայ, ածական, թվական (որին դեռ անծանոթ են)։ Ուշադրությունը հրավիրելով թվականի սյունակում խմբավորված բառերի վրա՝ հարցերի օգնությամբ վերլուծելով դրանք՝ կարելի է եզրակացնել, որ այդ բառերը ցույց են տալիս թիվ, քանակ, կարգ։

Թվականի տեսակների մասին գաղափար պետք է տալ գործնական եղանակով։ Որոշ վարժությունների կատարումից հետո սովորողներն ուսուցչի օգնությամբ եզրակացնում են.

- քանակական թվականները ցույց են տալիս առարկաների թիվը, քանակը և պատասխանում են քանի՞, որքա՞ն հարցերին,
- դասական թվականները ցույց են տալիս առարկաների հաջորդական կարգը, հերթականությունը և պատասխանում են ո՞րերորդ, քանի՞երորդ հարցերին,

[13] Ա. Տեր-Գրիգորյան,«Քերականության մեթոդիկա», Երևան 1977, էջ 164

- դասական թվականները կազմվում են քանակական թվականներից, որոնց վրա ավելանում են –երորդ կամ –րորդ մասնիկները։ Առաջին դասական թվականը մեկ թվականից չի կազմվում։

Աշխատանք պետք է տանել թվականների ուղղագրության ուսուցման ուղղությամբ, ծանոթացնել արաբական, հռոմեական թվանշաններին։ Այս ամենից հետո սահմանում են. այն բառերը, որոնք արտահայտում են թիվ ու թվային կարգ, պատասխանում են որքա՞ն, քանի՞, քանի՞երորդ, ո՞րերորդ հարցերին, կոչվում են *թվական անուն* կամ *թվական*։

<u>Դերանուն</u>։ Կրտսեր դպրոցականներին դերանունների մասին գաղափար պետք է տալ ինդուկտիվ եղանակով գոյականի, ածականի և թվականի հարաբերակցությամբ։ Խոսքում գոյական, թվական, ածական անունները չկրկնելու համար հաճախ փոխարինվում են անվան դեր կատարող բառերով։ Այդ պատճառով էլ դրանք կոչվում են դերանուններ։ Աշակերտներն ուսուցչի օգնությամբ տալիս են դերանվան սահմանումը. գոյական, ածական, թվական անուններին փոխարինող բառերը *դերանուններ* են։ Դերանունները լինում են մի քանի տեսակ, սակայն նրանք կծանոթանան միայն անձնական դերանուններին. անձի անվան փոխարեն դրվող դերանունները կոչվում են *անձնական դերանուններ*։

Ապա գաղափար պետք է տալ, որ՝ անձնական դերանունները բայի պես ունեն երեք դեմք՝ I, II և III և գոյականի ու բայի պես ունեն թիվ՝ եզակի ու հոգնակի։

Գաղափար պետք է տալ նաև դերանունների հոլովման մասին, անձնական դերանունների II դեմքի հոգնակի թվի Դուք, Ձեր, Ձեզ, Ձեզնից, Ձեզնով ձևերը որպես քաղաքավարական ձևեր օգտագործելու մասին։ Պետք է ասել, որ գրելիս դրանք միշտ սկսվում են մեծատառով՝ թե՛ հարգանքի, և թե՛ ցույց տալու համար, որ դրանք եզակի թվի համար են օգտագործվում։ Հետո սահմանում են. այն բառերը, որոնք փոխարինում են գոյական, ածական և թվական անուններին, փոփոխվում են դեմքով, թվով և հոլովով, կոչվում են *դերանուններ*։[14]

<u>Շաղկապ</u>։ Տարրական դասարաններում շաղկապի և ձայնարկության մասին տրվում է միայն ընդհանուր ծանոթություն։ Օրինակների միջոցով երեխաները տեսնում են, որ նախադասության մեջ գործածված *և, ու* բառերը մի դեպքում իրար են կապում նախադասության կազմի մեջ մտնող բառերը, մյուս դեպքում՝ առանձին նախադասությունները։ Երեխաները սահմանում են.

[14] Ջ. Գյուլամիրյան, «Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա», Երևան 2006, էջ 258

նախադասության անդամներ ու նախադասություններ իրար կապող բառերը *շաղկապներ* են։ Այդ բառերը նախադասության մեջ ոչ մի պաշտոն չեն կատարում, չեն հոլովվում, չեն խոնարհվում, չունեն ո՛չ դեմք, ո՛չ թիվ, ո՛չ ժամանակ։ Դրանից հետո ձևակերպում են. այն բառերը, որոնք նախադասություններն ու նրանց անդամները կապում են միմյանց, չեն հոլովվում, չեն խոնարհվում և նախադասության մեջ ոչ մի պաշտոն չեն կատարում, կոչվում են *շաղկապներ*։

Պետք է բացատրել, որ *և, ու* շաղկապներից առաջ ոչ մի կետադրական նշան չի դրվում։ *Եվ* շաղկապից առաջ դրվում է ստորակետ միայն այն դեպքում, երբ տարբեր են բարդ նախադասությունների ենթակաները։ Նախադասությունները միմյանց կապող *բայց, սակայն, որպեսզի, որովհետև, իսկ, եթե, որ* և այլ շաղկապներից առաջ միշտ դրվում է ստորակետ։

<u>Ձայնարկություն</u>։ Այս խոսքի մասի ուսուցումը կարելի է սկսել «Նախադասության տեսակներն ըստ բնույթի կամ արտասանության երանգի» թեմայի կրկնությամբ։ Աշակերտները կատարում են վարժություններ, որի ժամանակ նրանց ուշադրությունը պետք է ուղղորդել այն հանգամանքի վրա, որ թեև ձայնարկությունները չունեն որոշակի բառիմաստ, սակայն զգացմունքի, ուրախության, զայրույթի, տխրության, դժգոհության երանգ են արտահայտում, նախադասության մեջ չեն թեքվում, դեմք չունեն, թիվ չունեն և այլն։

Ձայնարկությունները սակավահնչյուն են, նախադասության անդամ չեն դառնում։ Դրանք որոշում են նախադասության երանգը։ Սովորողներն ուսուցչի օգնությամբ ձևակերպում են. զգացմունք, հուզմունք, կոչ, բացականչություն և նմանաձայնություն արտահայտող բառերը կոչվում են *ձայնարկություն*։[15]

Աշակերտները պետք է իմանան, որ ձայնարկություններն արտասանվում են բացականչական, հրամայական հնչերանգներով, դրանց վրա դրվում է բացականչական նշան կամ շեշտ, իսկ նախադասության անդամներից անջատվում են ստորակետով։

Այս ամենից հետո աշակերտներին հանձնարարել տարաբնույթ վարժություններ, որոնց մեջ առանձնահատուկ տեղ հատկացնել համակցված վարժություններին, որտեղ ընդգրկվում են անցած բոլոր խոսքի մասերը։

---

[15] Ջ. Գյուլամիրյան, «Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա», Երևան 2006, էջ 264

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով «Լեզվական տարրական գիտելիքների ուսուցումը» թեման՝ համոզվեցինք, թե այն որքան մեծ դեր է կատարում կրտսեր դպրոցում: Առանց նրա հնարավոր չէ պատկերացնել լեզվի ուսուցումը:

Քերականական հասկացություններն ընդհանրացված ու վերացական են և մեծ դժվարությամբ են հասնում երեխաների գիտակցությանը: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ այս տարիքի աշակերտների մտածողությունը կոնկրետ առարկայական է: Քերականական վերացական հասկացությունների ըմբռնման դժվարությունները հաղթահարելու գործում մեզ օգնության է գալիս զննական պարագաների օգտագործումը: Սակայն դրանք պետք է օգտագործվեն տեղին և չափավոր, այլապես օգուտի փոխարեն մեծ վնաս կհասցնեն ուսումնական աշխատանքին:

Պետք է խուսափել քերականության ուսուցումը կանոնների սերտման հանգեցնելուց: Դա կբերի նրան, որ աշակերտները մեխանիկորեն, բառացի անգիր կարտասանեն կանոնը, սակայն չեն հասկանա դրա իմաստը, և այն իրենց խոսքում չեն կիրառի: Աշակերտներն ուսուցչի օգնությամբ իրենք պետք է հանգեն տվյալ սահմանմանը, կարողանան գտնել համապատասխան օրինակներ ու վարժություններ: Այս դեպքում նրանք կանոնը կասեն ոչ թե մեխանիկորեն, այլ հասկանալով: Այս ամենը կարտացոլվի նրանց խոսքում:

Այսպիսով երեխաների մեջ քերականական հասկացությունների ձևավորման համար անհրաժեշտ է ուսուցման ընթացքում հետևողականորեն ուշադրություն դարձնել ուսումնասիրվող քերականական երևույթի լեզվական էական ու ձևական հատկանիշների տարբերակման ու ճանաչման վրա, կայուն զուգորդումներ ստեղծել բառի ու նրա թելադրած հարցերի միջև, որոշակի տարբերություն դնել էական ու ոչ էական հատկանիշների միջև, սովորեցնել լեզվական երևույթի քերականական սահմանումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2006, 328 էջ։
2. Ղարիբյան Ա. և ուրիշներ, Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1955։
3. Տեր- Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1980, 564 էջ։
4. Տեր- Գրիգորյան Ա., Քերականության մեթոդիկա, Երևան, 1977, 200 էջ։
5. Տեր- Գրիգորյան Ա., Քերականական տարրական գիտելիքների ուսուցումը II դասարանում, Երևան 1971։
6. Թ. Գ. Ջուհարյան, Բայի ուսուցման հիմնական հարցերը, Երևան, 1956։
7. Ա. Բահաթրյան, Քերականություն աշխարհիկ լեզվի, («Փոխանակ յառաջաբանի»), «Մանկավարժական թերթ», 1878, №4։
8. Рождественский Н. С., Кустарева В. А., Методика начального обучения русскому языку, М., 1965.